

## ՀՕՄ-Ի 100ԱՄԵԱԿԻ ԵՇԱՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Սիրելիներ,

Հայ Օգնութեան Միութիւնը կը կանգնի իր դարադարձի սեմին եւ կը պատրաստուի պատշաճ շուքով տօնելու իր հարիւրերորդ տարեդարձը, աչքերը կը սեւեռէ դէպի աշխատանքի նոր տասնամեակներու եւ հարիւրամեակներու:

Այսօր, ես ալ իբրեւ մէկ անդամը Հայ Օգնութեան Միութեան, ահաւասիկ կանգնած եմ դարաւոր այս միութեան յարկին տակ, օրհնութեամբ ու շնորհաւորանքի խօսքով միանալու 100ամեակի նշանակին հրապարակման հանդիսութեան: Կասկած չունիմ, որ հոս գտնուողներս, ինչպէս նաեւ ՀՕՄի աշխատանքին բոլոր մասնակիցներն ու ամենակիցները, անխառն հպարտութիւն կը զգանք մէկ դարեայ իրագործումներուն ու աշխատանքին համար, որ ՀՕՄինն է եւ իբրեւ անկորնչելի վաստակ կը միախառնուի հայ ժողովուրդի հաւաքական կեանքին:

Ինչպէս կ'իմանանք, նշանակին յղացքը արտայայտութիւն մըն է այն իրողութեան, որ ՀՕՄի անցեալի գործունէութիւնը միաձուլուած է ներկային հետ, ներկան շարունակութիւնն է անցեալին, իսկ այդ գործը, նուիրեալ աշխատանքը իբրեւ ոռոգող գետ, մեկնելով մեր Արարատէն, կը բաշխուի մեր ժողովուրդին:

Այս նշանակը, սիրելիներ, խորհրդանշիչ է նաեւ բազմիմաստ խորհուրդներու: Անիկա կը խորհրդանշէ Հայ Կնոջ աշխատանքն ու լծակցութիւնը՝ մեր ժողովուրդին ու հայրենիքին կարիքներուն հոգացման մէջ: Անիկա կը խորհրդանշէ լուռ ու աննահանջ աշխատանքը, որ ի գործ դրուած է՝ սպեղանի տրամադրելու հայ վիրաւորին, հոգածութիւն՝ հայ ծերունիին եւ ուսանողին, Հայաստանին, Արցախին, Ջաւախքին ու բոլոր այն օճախներուն, որոնք սիւթական կամ բարոյական աջակցութեան պէտքը զգացած են: Տակաւին, այս նշանակը խորհրդանշիչ է Հայ Կնոջ անտեղիտալի կամքին, թէ՛ այս բազմաճիւղ գործունէութիւնը, իբրեւ վարար գետ, պիտի շարունակէ հոսիլ յառաջիկայ դարուն, ի խնդիր մեր ժողովուրդի բարօրութեան ու հայրենիքի բարգաւաճման:

Սիրելիներ,

Մեր օրհնութեան կողքին, այսօր կ'ուզենք նաեւ շնորհաւորել ՀՕՄը, իր մէկ դարեան ծառայութիւններուն ու անվիատ աշխատանքին համար: Կարելի չէ մոռնալ, թէ ՀՕՄի գործը ճամբայ ելած է ծանր ու դժուարին պայմաններու մէջ, անոր երթը միշտ ալ դիմագրաւած է դժուարութիւններ, բայց ՀՕՄը յաջողած է յաղթահարել բոլոր դժուարութիւններուն, ինքզինք գերազանցելով՝ քանդած է արգելակող պատնէշներ ու աշխատանքը յառաջ տարած է աննահանջ:

Օրհնութիւն եւ փառք՝ ՀՕՄի հիմնադիրներուն եւ ծառայական դրօշը բարձր պահողներուն: Թող Երկնաւոր Հայրը իր Ս. Աջը ընդմիշտ հովանի պահէ ՀՕՄի աշխատանքի դաշտերուն վրայ ու անոր պարգեւէ յաջող երթ՝ դէպի նոր տասնամեակներ ու հարիւրամեակ:

Աղօթարար՝

Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ  
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի

12 Նոյեմբեր 2009